ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 112-Ա

«22» փետրվարի 2024թ.

«ԼԻԴԵՐ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի, 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից 2024 թվականի փետրվարի 19-ի Մ-3353 ստացված մտից գրությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի և «Լիդեր Քնսթրաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2023 թվականի սեպտեմբերի 19-ին կնքված ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման N ՀՀ ԳՄ ԳՀԱՇՁԲ-2023/02 ծածկագրով պայմանագիրի միակողմանի լուծման հանգամանքը «Լիդեր Քնսթրաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (ՀՎՀՀ 07626294 , գործունեության հասցե՝ Ք. Իջևան Գանինի 13) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակցի

անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«Լիդեր Քնսթրաքշն» ՍՊԸ	07626294	Ք. Իջևան Գանինի 13	Աշխատանքների կատարման վերջնաժամկետի խախտում	1.3-րդ կետ ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ ա ենթակետ		ՀՀ ԳՄ ԳՀԱՇՁԲ-2023/02 Հրաման N 112-Ա Ամսաթիվ 22/02/2024:

2. Սույն հրամանի օրինակը ուղարկել «Լիդեր Քնսթրաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և ՀՀ ֆինանսների նախարարությանը:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2024 թվականի հունվարի 17-ի N 27-Ա հրամանի 1-ին կետով ստեղծված հավելվածի քաղաքաշինական պատասխանատու ստորաբաժանմանը:

22.02.2024

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Ք. Գավառ